ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2023թ. թիվ 854-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման 2.1-րդ կետով, հիմք ընդունելով համաձայնության մասին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ուղարկված 30.11.2023թ. թիվ 01/109.4/08831-2023 գրությունը և ՀՀ կառավարության 21.12.2023թ. թիվ 2245-Ն որոշումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին «1146. Հանրակրթության ծրագիր» ծրագրի «Տարրական ընդհանուր հանրակրթություն», «Հիմնական ընդհանուր հանրակրթություն» և «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» միջոցառումներով նախատեսված գումարի շրջանակներում կատարել վերաբաշխում և մարզպետի աշխատակազմի ենթակայության մի շարք դպրոցների լրացուցիչ հատկացնել 22773.0 հազ. դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

27/12/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 27
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. դեկտեմբերի 27-ի
թիվ 854-Ա որոշման

Ց Ա Ն Կ

Ֆինանսական վատ վիճակով պայմանավորված լրացուցիչ գումար հատկացվող Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների

ՀՀ	Դպրոցի անվանումը	Գումարի չափը / հազ. դրամ/
1	Ազնվաձորի միջնակարգ դպրոց	1490.0
2	Արջուտի միջնակարգ դպրոց	310.0
3	Եղեգնուտի միջնակարգ դպրոց	400.0
4	Վահագնաձորի հիմնական դպրոց	495.0
5	Փամբակի հիմնական դպրոց	1499.0
6	Ծաթերի հիմնական դպրոց	601.0
7	Ծաղկաշատի հիմնական դպրոց	650.0
8	Կաճաճկուտի հիմնական դպրոց	1995.0
9	Մղարթի հիմնական դպրոց	1190.0
10	Նեղոցի հիմնական դպրոց	1010.0
11	Շամուտի հիմնական դպրոց	3480.0
12	Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց	2990.0
13	Գեղասարի միջնակարգ դպրոց	500.0
14	Շենավանի հիմնական դպրոց	1790.0
15	Քարաձորի հիմնական դպրոց	885.0
16	Ամրակիցի միջնակարգ դպրոց	1098.0
17	Արմանիսի հիմնական դպրոց	300.0
18	Յաղդանի հիմնական դպրոց	1495.0
19	Բլագոդարնոյեի հիմնական դպրոց	595.0
	Ընդամենը	**22773.0**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

27/12/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ